ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունիսի 2026 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի №132-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Գևորգ Չաուշի 14/3 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ Բազմաբնակարան շենք) բնակիչների 2026 թվականի փետրվարի 3-ի դիմումը, որով բնակիչները հայտնել են, որ 2011 թվականից մինչև այդ պահը Բազմաբնակարան շենքի սպառման համակարգի տեղակայման տարածքի նկատմամբ դիմող անձանց իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթղթերի ձեռքբերումը եղել է անհնար,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի հունիսի 2-ի №Ե-2015-26 և Բազմաբնակարան շենքի բնակիչների 2026 թվականի հունիսի 2-ի գրությունները, որոնցով վերջիններս հայտնել են, որ չեն առարկում Բազմաբնակարան շենքի բնակարանների սպառման համակարգերը բաշխման ցանցին սույն որոշմամբ սահմանված կարգով միացնելուն, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշում է**.

1. Հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 25-ի «Երևան քաղաքի Գևորգ Չաուշի 14/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին

միացնելու մասին» №132Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) շենքի՝ սույն որոշման հավելվածում չներառված բնակարանների և այլ սպառման համակարգերն 0.22 կՎ լարման էլեկտրական ցանցին միացման նպատակով նախաձեռնող անձը (բնակիչը) դիմում է Ընկերություն՝ կից ներկայացնելով Կանոնների 13.2 կետով սահմանված՝ սպառման համակարգը 0.22 կՎ լարման էլեկտրական ցանցին միացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (սպառման համակարգի տեղակայման տարածքի նկատմամբ դիմող անձի իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չլինելու պարագայում՝ սպառման համակարգի տեղակայման տարածքի նկատմամբ դիմող անձի իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթղթի փոխարեն կարող է ներկայացվել իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ տվյալ տարածքում դիմող անձի բնակության փաստը հավաստող տեղեկանք) և վճարում միացման վճար՝ 10 կՎԱ հզորությամբ միացման դեպքում՝ 138 000 ՀՀ դրամի և 14 կՎԱ հզորությամբ միացման դեպքում՝ 204 000 ՀՀ դրամի չափով.».

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
հունիսի 2026թ.